19 փետրվարի 2015 թվականի N 142 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N 1307-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի նոյեմբերի 21-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին և «Արփա-Սևան» թունելի վերականգնման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկին գույք ամրացնելու, ինչպես նաև «Սևան-Հրազդանյան-ջրառ» և «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրական կապիտալներն ավելացնելու մասին» N 1307-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրում և ամբողջ տեքստում «տարածքային կառավարման» բառերը փոխարինել «գյուղատնտեսության» բառով.

2) որոշման 1-ին կետի 1-ին և 3-րդ ենթակետերում «14.170.150.989,0» և «9.866.614.555,0» թվերը փոխարինել համապատասխանաբար «13.863.375.535,0» և «9.808.423.880,0» թվերով.

3) որոշման N 1 հավելվածի՝

ա. 13-րդ կետից հանել «Ծաղկաշենի ջրամբարի շինարարություն» և «Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի 2-րդ կարգի ջրանցքի վերականգնում» տողերը,

բ. 15-րդ կետի 1-ին տողում «Լանջազատի» բառը փոխարինել «Լանջաղբյուրի» բառով,

գ. 16-րդ կետի 5-րդ տողից հանել «և Նալբանդի ջրանցքի ՊԿ 141+22–ՊԿ 183+73 հատվածների վերականգնում» բառերը, իսկ «757,537,187» թիվը փոխարինել «452,202,875» թվով,

դ. 17-րդ և 18-րդ կետերը համապատասխանաբար շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

17.	«Գետիկ»	1) Պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքներ. Գետիկի պատվար	11,183,576 305,334,312
		2) Նալբանդի ջրանցքի ՊԿ 141+22-ՊԿ 183+73 հատվածների վերականգնում	
18.	«Լոռու ջրանցք»	1) Պատվարների առաջնահերթ վերականգնման աշխատանքներ. Մեծավանի պատվար	64,680,138 4,182,500
		2) Պատվարների մոտեցնող ճանապարհների վերականգնում. Մեծավանի ջրամբար	

»,

ե. ուժը կորցրած ճանաչել 21-րդ կետը,

զ. ընդամենը տողում «14,170,150,989» թիվը փոխարինել «13,863,375,535» թվով.

4) որոշման N 3 հավելվածի՝

ա. 12-րդ կետում «5,140,305,249» թիվը փոխարինել «5,082,114,574» թվով,

բ. ընդամենը տողում «9,866,614,555» թիվը փոխարինել «9,808,423,880» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ